ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «Դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագիրը սահմանելու մասին» N 43-Ա որոշման 5-րդ բաժինը լրացնել նոր 9.1 և 9.2 կետերով հետևյալ բովանդակությամբ.

«9.1 Դատական կարգադրիչների գլխավոր խմբի պաշտոնների լամբակները՝

1) արդարադատության գնդապետի լամբակների վրա ամրացվում են երեք ոսկեզօծ ութանկյուն աստղ՝ 15 մմ տրամագծով, որոնցից երկուսը գտնվում են վերևի և ներքևի եզրագծերից 8 մմ հեռավորության, նարնջագույն, 6 մմ լայնությամբ, իրարից 7 մմ հեռավորության վրա գտնվող երկու լուսաշերտերի վրա, իսկ երրորդը՝ լուսաշերտերի մեջտեղում, ներքևի եզրագծից 30 մմ դեպի խորհրդանիշը (ձև 16.1).

2) արդարադատության փոխգնդապետի լամբակների վրա ամրացվում են երկու ոսկեզօծ ութանկյուն աստղ՝ 15 մմ տրամագծով, վերևի և ներքևի եզրագծից 8 մմ հեռավորության, նարնջագույն, 6 մմ լայնությամբ, իրարից 7 մմ հեռավորության վրա գտնվող երկու լուսաշերտերի վրա (ձև 16.2)

9.2 արդարադատության մայորի լամբակների վրա ամրացվում է մեկ ոսկեզօծ ութանկյուն աստղ՝ 15 մմ տրամագծով, որը գտնվում է ներքևի և վերևի եզրագծերից 8 մմ հեռավորությամբ գտնվող երկու՝ նարնջագույն, 6 մմ լայնությամբ, իրարից 7 մմ հեռավորության վրա գտնվող լուսաշերտերի մեջտեղում (ձև 16.3)»:

2. 5-րդ բաժնի 10-րդ կետի «6 մմ լայնությամբ նարնջագույն լուսաշերտ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ արդարադատության մայորի՝» բառերը։

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի թիվ 43-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի թիվ 43-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ դատական օրենսգրքում 2009 թվականի ապրիլի 7-ին ընդունված «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ։

ՀՀ դատական օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն դատական կարգադրիչներին կարող էր շնորհվել առավելագույնը արդարադատության կապիտանի կոչում։ ՀՀ դատական օրենսգրքի դրույթներին համապատասխան 2008 թվականի հունվարի 17-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում, որով սահմանվեց դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագիրը։

2009 թվականի ապրիլի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի 204-րդ հոդվածի համաձայն

դատական կարգադրիչների համար կարող է շնորհվել առավելագույնը արդարադատության գնդապետի կոչում։ Այսինքն արդարադատության կապիտանի կոչումին հաջորդում է արդարադատության մայորի, արդարադատության փոխգնդապետի և արդարադատության գնդապետի կոչումը։ Իսկ 2008 թվականի հունվարի 17-ի «Դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագիրը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ բնականաբար նախատեսված չի արդարադատության մայորի, արդարադատության փոխգնդապետի և արդարադատության գնդապետի տարբերանշանների նկարագիրը,։

Ելնելով վերոգրյալից և ՀՀ դատական օրենսգրքի 204-րդ հոդվածի դրույթների կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 17-ի «Դատական կարգադրիչի համազգեստի, տարբերանշանների և խորհրդանշանների նկարագիրը սահմանելու մասին» որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացում։